ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

14 հունիսի 2024թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

ՕՐԱԿԱՐԳ

1. ԻԿՄ Կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվություն	*ԿԾ պատ.*
2. Ամբիոնում դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ղեկավարների հաշվետվություններ	Զեկ. ղեկավարներ, անդամներ
3.2023-24 ուս տարվա. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:	Դեկան
4. ՈւԽ և ՈՒԳԸ նախագահների կատարած աշխատանքների հաշվետվություն	ՈւԽ և ՈՒԳԸ նախագահներ

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում 10/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին՝ « ԻԿՄ Կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվություն» հարցի վերաբերյալ ԻԿՄ կրթական ծրագրի ղեկավար, տեխ.գ.թ., Ա.Հովակիմյանի զեկույցը հետևյալն էր.

2023թ. օգոստոս ամսին կազմվել է կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքային պլանը 2023-24 ուս. տարվա համար: Հաշվետու ժամանակաշրջանում կրթական ծրագրի հետ կապված աշխատանքները կատարվել են համաձայն աշխատանքային պլանի և ժամանակացույցի: Գործառույթները կազմակերպվել են ըստ թիրախային խմբերի՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանողներ, ուսումնաօժանդակ անձնակազմ, արտաքին շահառուներ:

Ուսումնական տարվա մեկնարկին կազմակերպվել է հանդիպում պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, որի ընթացքում ներկայացվել են գործող կրթական ծրագրի մասնագրերը ըստ տվյալ ուումնական տարում գործող ուսումնական աշխատանքային պլանի: Դասախոսների հետ ճշտվել են բոլոր առարկայական նկարագրիչները և գնահատման սանդղակները: Քննարկվել է առարկայական պորտֆոլիոների առկայության հարցը, դրանց համապատասխանությունը դասընթացների նկարագրիչներին, e-learning հարթակում առարկայի աշխատանքային պլանի, հարցաշարերի, գրականության ցանկի, տիպային խնդիրների լուծումների տեղադրելու անհրաժեշտությունը: Նշվել է, որ registrar համակարգում պետք է գրանցել տեղեկատվություն գնահատման բաղադրիչների վերաբերյալ: Ուսումնական տարվա ընթացքում հանգուցալուծվել են ռցանց հարթակների հետ կապված բոլոր առաջ եկած հարցերը:

Սեպտեմբեր ամսին կազմակերպվել են հադիպումներ 1-ին կուրսի ուսանողների հետ (մասնակցության թերթիկներ): Ուսանողներին ներկայացվել են ֆակուլտետի կառուցվածքը, ուսումնական գործառույթների հետ կապված համալսարանում գործող կանոնակարգերը, ուսումնական և ուսումնաօժանդակ ռեսուրսներից օգտվելու կարգը, համակարգչային լսարանների աշխատանքի գրաֆիկը և դրանցից օգտվելու կանոնակարգը: Ներկայացվել է գրադարանից, ինչպես նաև, էլեկտրոնային գրադարանից օգտվելու կարգը:

Ուսանողներին ներկայացվել է e-learning հարթակը, հարթակից օգտվելու հնարավորությունները և կանոնները, համալսարանական էլեկտրոնային հաշվեհամարների առկայությունը յուրաքանչյուր ուսանողի համար:

Ուսանողներին ներկայացվել է կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ուսումնական պլանի կառուցվածքը, դասավանդվող առարկաների ցանկը, մոդուլային ուսուցման համակարգը, կրթական ծրագրի վերջնարդյունքները, դրանց հասնելու մարտավարությունը և քարտեզը: Մատնանշվել են առաջին կուրսում դասավանդվող պարտադիր և կամընտրական առարկաները, կամընտրական առարկաների ընտրության կանոնակարգը:

Ուսանողներին ներկայացվել է երկրորդ կուրսից նեղ մասնագիտական առարկաների ընտրության հնարավորությունը, ինչը թույլ կտա նրանց մասնագիտանալ հետևյալ ուղղություններով՝ ընդհանուր համակարգչային գիտություն, թվային անվտանգություն, մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա:

Ուսանողները ծանոթացել են ուսումնական գործընթացների կառուցվածքին և բաղադրիչներին՝ դասախոսություններ, գործնական պարապմունքներ, ինքնուրույն աշխատանք,

տնային աշխատանքներ, հետազոտական աշխատանք, մասնագիտական պրակտիկա, ավարտական աշխատանք: Ներկայացվել են հաշվետվողականության ձևերը:

Ներկայացվել և քննարկվել է ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքի, մասնագիտական և համընդհանուր կարողությունների և հմտությունների ստուգման բաղադրիչները, դրանց իրականացման և գնահատման ձևերը՝ ստուգողական աշխատանքներ, անհատական հանձնարարություններ ինքնուրույն կատարման համար, ընթացիկ ստուգումներ և քննություններ, եզրափակիչ քննություններ, հետազոտական աշխատանքի և մասնագիտական պրակտիկայի վերաբերյալ հաշվետվություններ: Քննարկվել է գնահատման բազմագործոն համակարգը: Ներկայացվել է մասնաճյուղում գործող ակադեմիական ազնվության պահպանման կարգը, գրագողության դեմ պայքարի կիրառվող մոտեցումները և միջոցները:

Տեղեկություն է տրվել պարբերաբար անցկացվող ուսանողական հարցումների և դրանց նպատակների մասին: Ուսանողները տեղեկացվել են, որ կարող են իրենց կարծիքը հայտնել և հիմնավորել դասավանդվող առարկաների, քննական համակարգի, դասավանդման և ուսումնառության մեթոդիկայի և այլնի վերաբերյալ: Նրանք տեղեկացվել են նաև դաընթացի կրկնության դեպքերի և կրեդիտային համակարքով ակադեմիական պարտքերի մարման գործընթացների մասին:

Կազմակերպվել են հանդիպումներ 2-4-րդ կուրսերի ուսանողների հետ (մասնակցության թերթիկներ): Ամեն կուրսում ներկայացվել և քննարկվել են տվյալ կուրսի համար ուսումնական պլանի բաղադրիչները: Ուսանողներին ներկայացվել է 2023-24 ուստարում հետազոտական բաղադրիչ ներառող առարկաների ցանկը ՝ Մաթ. Մոդելավորում և թվային մեթոդներ, Web-ծրագրավորում, Օպերացիոն համակարգեր, Գործույթների հետազոտում: Քննարկվել են հետազոտական թեմաների ընտրության և իրականացման հետ կապված հարցեր, անհատական հետազոտական պորտֆոլիոյի ձևավորման հնարավորությունը և անհրաժեշտությունը ինչպես համալսարանում ուսումնառության գործընթացի, այնպես էլ հետագայում աշխատաշուկայում ներկայացնելու համար: Բացատրվել է հետազոտության իրականացման մոտեցումները (խմբային կամ անհատական), աշխատանքի պատրաստման, հաշվետվողականության և արդյունքների ներկայացման ձևը, գնահատման մարտավարությունը:

Բարձր կուրսի ուսանողներին ներկայացվել են կամընտրական մասնագիտական առարկաները, հիմնավորվել է կրթական ծրագրում դրանց առկայության նպատակահարմարությունը և ուղղորդվածությունը վերջնարդյունքների ձեռքբերմանը: Կազմակերպվել են հանդիպումներ ուսանողների և կամընտրական առարկաները դասավանդող

դասախոսների հետ, որոնց ընթացքում ներկայացվել է այդ առարկաների արդիականանությունը և պահանջվածությունը աշխատաշուկայում:

Ավարտական կուրսերի ուսանողներին (4-րդ կուրս՝ առկա ուսուցում, 5-րդ կուրս՝ հեռակա ուսուցում) ներկայացվել է 6-շաբաթյա մասնագիտական պրակտիկայի անցկացման կանոնակարգը: Նախատեսված է այս ուսումնական տարում մասնագիտական պրակտիկան կազմակերպել ԷԼԹԻ ՔՈԴԻՆԳ ՍՊԸ կազմակերպությունում (ղեկ. Լ.Ծատուրյան) և ֆակուլտետին կից ՞Թվային անվտանգություն՞ աշխատանոցում (ղեկ. Ս. Մնացականյան): Ուսանողների հետ քննարկվել են պրակտիկայի շրջանակում ներառված խնդիրները, ընթացիկ վերահսկողության կարգը, ակնկալվող վերջնարդյունքները, հաշվետվողականության ձևը:

Ավարտական կուրսի ուսանողներին ներկայացվել է ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և հաստատման կարգը, պարբերական հաշվետվողականության ձևերը ըստ աշխատանքների կատարման պլան-ժամանակացույցի, աշխատանքի ներկայացման կարգը, գնահատման շափանիշները և եղանակը:

Հետևողականություն է ցուցաբերվել ուսումնական գործընթացների կազմակերպման հետ կապված. անհրաժեշտ ուսումնական նյութերի, հարցաշարերի, տիպային խնդիրների և դրանց լուծումների, հարցատոմսերի նմուշների ժամանակին հրապարակմանը e-learning հարթակում, ուսանողների հետ ընթացիկ քննությունների արդյունքների քննարկումներին, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կոնսուլտացիաների անցկացմանը: Վերահսկվել է ընթացիկ և եզրափակիչ քննությունների ընթացքը:

Պարբերաբար ստուգվել են դասամատյանները, գրանցումների համապատասխանությունը առարկայական պլաններին, դուրս են բերվել անհամապասխանությունները, ամբիոնի և դասախոսների հետ պարզապանվել են դրանց պատճառները: Ստուգվել են գրանցումները ուսանողների հաճախումների վերաբերյալ, աշխատանք է տարվել շատ բացակայություններ ունեցող ուսանողների հետ:

Ուսանողներին տրամադրվել է համապատասխան խորհրդատվություն և օգնություն ուսումնական գործընթացին առնչվող փոփոխությունների վերաբերյալ:

Վերահսկողության տակ է եղել ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքը, մասնավորապես համակարգչային լսարանների հասանելիության և սպասարկման հետ կապված: Ուշադրություն է դարձվել ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ բոլոր ծրագրային համակարգերի առկայությանը, համացանցի հասանելիությանը:

ԵՊՀ ԻՄ-ում կազմակերպվել են հանդիպումներ դպրոցականների հետ, ներկայացվել են ծրագրավորման և տեղեկատվական տեխնոլոգիաների, թվային անվտանգության, ռոբոտաշինության և մեխատրոնկաի ոլորտների արդի խնդիրները և մարտահրավերները, ԻԿՄ կրթական ծրագիրը, ֆակուլտետում առկա մասնագիտացումները:

Կրթական ծրագրի շրջավարտների և շահառու ընկերությունների ներկայացուցիչների հարցման արդյունքների վերլուծության հիման վրա ծրագրում ներառվել են համապատասխան փոփոխություններ և իրականացվել են միջոցառումներ, մասնավորապես, օտար լեզուների իմացության, մասնագիտական պրակտիկ կարողությունների և հմտությունների զարգացման ուղղությամբ:

Փետրվար ամսից մշտապես աշխատել է կրթական ծրագիրը վերանայող խումբը հետևյալ կազմով՝ Հովակիմյան Ա., Սիմոնյան Գ.. Զաքարյան Մ., Սարգսյան Գ., Յոլչյան Ռ., Ճաղարյան Մ., Մնացականյան, Ս. Գուլակյան: Խումբը պարբերաբար քննարկել է ընդհանուր մասնագիտական կառուցամասի և երեք մասնագիտացումների առարկաները, դրանց նկարագրիչները, գնահատման համակարգը, վերջնարդյունքները: Մշակվել է 2024-2028թթ. համար ԻԿՄ կրթական ծրագիրը:

Աշխատանքներ են տարվում դասավանդվող առարկաների և կրթական ծրագրի վերջնարդյունքների հապատասխանության քարտեզը ավտոմատ ձևավորելու և ստուգելու համար համակարգչային ծրագրի մշակման և ներդրման ուղղությամբ:

Արտահայտվեցին-Գ.Սարգսյանը ,Ք.Օթարյան:

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 10/2

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները համարել բավարար:

Օրակարգի երկրորդ՝

«Ամբիոնում դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ղեկավարների հաշվետվություններ», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ք.Օթարյանը: Նա ներկայացրեց հաշվետվություն կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ, որը հետևյալն էր.

Արդի տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց փոխվում է նաև շենքերի/շինությունների անվտանգության համակարգերի կառուցվածքը: 21-րդ դարի քաղաքացին տարածք ներս մտնելիս ակնկալում է անհպում նոյնականացում՝ ժամանակ խնայելու և լրացուցիչ սարքեր իր հետ կրելու հոգսից ազատ լինելու նպատակով: Նմանատիպ սարքեր են մարդու բիոմետրիկ տվյալների՝ դեմքի ճանաչման, մատնահետքի և այլ միջոցներով նոյնականացում իրականացնող սարքերը: Բոլոր այս լուծումները գործ ունեն թվային հարթակներում պահպանվող թվայնացված անձնական տվյալների հետ, որը նշանակում է, որ թվային անվտանգությունը պիտի հատուկ ուշադրությամբ վերահսկվի:

Դրամաշնորհային հետազոտական նախագծի շրջանակում առաջարկում ենք լուծում, որտեղ բոլոր հավաքագված տվյալները պահվում են բաց այլագրերով ստեղծված տվյալների պահոցում, շենքի տարածքում տեղադրված սպասարկիչում, որի աշխատանքը չի խաթարվում նրա և համացանցի խաթարման դեպքում: Լուծման առանձնայատկություններից մեկը հենց մատչելիությունն է՝ ճարտարագիտական և թվային անվտանգության ապահովման ջանքի և ծախսերի տեսակետից:

Դրամաշնորհի շրջանակներում նախատեսել ենք mongoDB տվյալների պահոցը փոխարինել Մետաքս բաշխված ցանցով և Named Data Network ճարտարապետությամբ ԳՀԶԿի կողմից ստեղծված բաց այլագրերով տվյալների պահոցով:

1. **Համակարգն արդեն աշխատում է Metax պահոցի միջոցով՝ անձնակազմի գրանցումը և նույնականացումը իրականացվում են Metaxից վերցված տվյալներով:**
2. **Համակարգում ավելացված է ամսական և շաբաթական հաշվետվությունների արտահանման հնարավորություն:**
3. **Յուրաքանչյուր անձի համար նույնպես կատարվում է հաշվետվության արտահանում:**
4. **Դեմքի նույնականացման սարքը հավաքված է արկղի մեջ և ամրացված է թվային անվտանգության աշխատանոցի մուտքի մոտ:**
5. **Գրանցվել է աշխատանոցի անձնակազմը:**
6. **Կատարվում են պարբերական ստուգումներ:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 10/3

Ա.Հովակիմյանի ղեկավարությամբ իրականացված «Պատկերի ճանաչման թվային անվտանգության համակարգի տեղադրում և վերահսկում» վերնագրով հետազոտական

աշխատանքի ընթացիկ հաշվետվությունը կատարված է պատշաճ կերպ և համապատասխանում է նման աշխատանքների ներկայացման որակական չափանիշներին: Ֆակուլտետի Գիտական խորհուրդը առաջարկում և նպատակահարմար է գտնում թեմայի ֆինանսավորումը:

Օրակարգի երրորդ **«2023-24 ուս.տարվա ավարտական աշխատանքների պաշտպանության** արդյունքների ամփոփում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ դեկանի ժ/պ Մ.Զաքրյանը:

Նա ներկայացրեց, որ առկա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհացուցիչէին գերազնց գնահատակներ ստացան այն ուսանողները, ում աշխատանքների ծրագրային իրականացումները անթերի էին, իսկ հեռակա ուսուցման համակարգում գերազանց գնահատված աշխատանքներ չկային, լավ գնահատվեցին միայն երկու ուսանողների աշխատանքները:

Անբավարար աշխատանքներ չկային

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 10/4

Ընդունել ի գիտություն

Օրակարգի չորրորդ՝ «ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահների կատարած աշխատանքների հաշվետվություն», **հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան ուսանողուհիներ Դ.Գուլակյանը և Ս.Սահակյանը: Նրանք ներկայացրեցին, որ**

2023 դեկտեմբեր « Մեդիաանվտանգություն » թեմայով ,իրազեկում որը իրականացվեց -ԳՀԶԿ ի աշխատակիցներ Վալենտինա Ասկարյանի և Մարիամ Հախվերդյանի կողմից
2024 թ մայիսին «Linux» օպերացիոն համակարգի մասին զեկույց իրականացրեց 3-րդ կուրսի ուսանող Սահակ Գուլակյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 10 /5

Ընդունել ի գիտություն